Արձանագրություն N 12

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3» ծածկագրով երկու փուլով մրցույթի գնահատող հանձնաժողովի՝ երկրորդ փուլի հրավերի վերաբերյալ պարզաբանում ներկայացնելու մասին նիստի

ք. Երևան

«16» հունվարի 2024թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Ս. Հովհաննիսյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնական,
Ա. Արամյան - ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ,
Թ. Ղալայան - ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժնի պետ,
Ա. Ղազարյան - ՀՀ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական,
Ս. Մինասյան - ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ,

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան - ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի պետ,

Բացակայում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Է. Հակոբյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ,

Հանձնաժողովի անդամ

Ա. Ավանեսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ,
Գ. Մանթաշյան - ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ,

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հաստատել և ներկայացնել հրավերի վերաբերյալ պարզաբանումը
2. Հաստատել հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Երկրորդ փուլի հրավերի վերաբերյալ տրվող պարզաբանման մասին

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված՝ <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 14-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով գնահատող հանձնաժողովն իր իրավասության շրջանակներում

Որոշեց.

1. հաստատել և տրամադրել «ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3» ծածկագրով ընթացակարգի երկրորդ փուլի հրավերի վերաբերյալ 2024 թվականի հունվարի 11-ին ստացված հարցման վերաբերյալ պարզաբանումը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի ու վայրի մասին

«ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3» ծածկագրով ընթացակարգի երկրորդ փուլի հայտերի բացման նպատակով հանձնաժողովի նիստը տեղի կունենա սույն թվականի հունվարի 24-ին ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ _____ Ս. Հովհաննիսյան

_____ Ա. Արամյան

_____ Թ. Ղալայան

_____ Ա. Ղազարյան

_____ Ս. Մինասյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան

ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3 ծածկագրով երկու փուլով մրցույթի երկրորդ փուլի հրավերի վերաբերյալ ստացված հարցման ու պարզաբանման վերաբերյալ հայտարարություն

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3 ծածկագրով երկու փուլով մրցույթի երկրորդ փուլի հրավերի վերաբերյալ ստացել է հարցում: Հարցումը և ներկայացված պարզաբանումը ներկայացվում են ստորև.

Արդյո՞ք 2024 թվականի մայիսի 14-16-ը Երևանում անցկացվելիք Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդի 2024 թվականի տարեկան հանդիպման լուսաբանումը իր մեջ ներառելու է արբանյակային հեռարձակում:

Եթե այո, ապա ո՞վ է պատասխանատու եթերային ազդանշանը ամրագրելու, տեխնիկական սարքավորումների ապահովման (DSNG) համար և որո՞նք են լինել ու հեռարձակման վայրերը:

Տարեկան հանդիպման արբանյակային հեռարձակում չի նախատեսվում:

3,2 կետի տեխնիկական առաջադրանքի առաջին հատվածում նշված է բարձրակարգ թեթ և մարդատար մեքենաների մասին: Խնդրում եմ հստակեցնել անհրաժեշտ մեքենաների քանակը ըստ կատեգորիաների: Արդյոք բոլոր նշված անձանց տրամադրվելու է միանման կատեգորիայի մեքենաներ:

Բոլոր նշված անձանց պետք է տրամադրվեն միանման կատեգորիայի մեքենաներ:

Մասնավոր դաշտում առկա չեն հիբրիդ, էլեկտրական կամ բենզինային շարժիչով մինչև 8 տարեկան ավտոբուսներ: Շուկայում առկա են եվրոպական արտադրության ավտոբուսներ, որոնք միջինում 2008 ից 2013 թվականի արտադրության են:

Նման ծավալի աշխատանքն ապահովելու համար արդյո՞ք ընդունելի կլինեն միջինում 10-13 տարեկան ավտոբուսների գործածությունը:

Տեխնիկական բնութագրով սահմանված է, որ ավտոբուսները պետք է լինեն առավելագույնն ութ տարվա արտադրության, իսկ հիբրիդ կամ էլեկտրական լինելու հանգամանքը ցանկալի է և կդիտվի որպես առավելություն:

Հեռախոս՝ (+374) 11 800-114

Էլ. Փոստ՝ ani.aghababyan@minfin.am

Պատվիրատու՝ ՀՀ ֆինանսների նախարարություն